ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով ազգային շահերից և առողջապահության բնագավառում նրանց միջև ձևավորված ավանդական կապերից,

հաշվի առնելով երկու Կողմերի շահագրգռվածությունը երկարաժամկետ հիմքերով փոխշահավետ համագործակցության հետագա զարգացման հարցում,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պարտավորվում են զարգացնել համագործակցություն ի շահ առողջապահության ազգային համակարգերի հետագա կատարելագործման:

Հոդված 2

Կողմերը պայմանավորվեցին զարգացնել փոխշահավետ համագործակցություն գործնական առողջապահության և բժշկագիտության հետևյալ բնագավառներում.

- առողջապահության կազմակերպում և տնտեսություն,
- հիվանդությունների կանխարգելում,
- արտակարգ իրավիճակների և համաճարակային դրության գծով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող օպերատիվ տեղեկության փոխանակում,
- մեծահասակ և փոքրահասակ բնակչությանը մասնագիտացված օգնության ցուցաբերում,
- գիտական և բժշկական կադրերի պատրաստում,
- դեղագործական և բժշկական տեխնիկա:

Հոդված 3

Կողմերը պայմանավորվեցին, որ համատեղ գործունեության առաջնային ուղղություններն են.

- վերականգնողական-պլաստիկ վիրաբուժություն,

- օրգանների փոխպատվաստում,
- նյարդաբանություն և նյարդավիրաբուժություն,
- ՁԻԱՀ-ի հիմնախնդիր,
- նարկոլոգիա և տոքսիկոլոգիա,
- աջողջարանաբուժություն,
- ալերգիա և իմունոլոգիա,
- ուռուցքաբանություն,
- մանկաբարձություն, գինեկոլոգիա, վերարտադրություն
- պրոկտոլոգիա,
- սպելեոբուժություն,
- ակնաբուժություն,
- մանկական ուռոնեֆրոլոգիա,
- մանկական պրտեզավորմամբ վերականգնում:

Այս ցանկը սահմանափակման ենթակա չէ և կարող է ընդլայնվել:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի 2-3-րդ հոդվածներով համագործակցությունը կիրականացվի համատեղ գիտական հետազոտությունների, խորհրդակցությունների անցկացման ճանապարհով, մասնագետների և բժշկատեխնիկական տեղեկության փոխանակման, մեթոդական հանձնարարականների մշակման, գիտաժողովների կազմակերպման, մենագրությունների և հոդվածների հրապարակման, համագործակցության այլ ձևերով, որոնց թեման և ժամկետները որոշված են:

Հոդված 5

Կողմերը համաձայնեցին ապահովել արտակարգ իրավիճակներում արտակարգ բուժական-խորհրդատվական և հատուկ նյութատեխնիկական փոխադարձ օգնություն:

Հոդված 6

Կողմերը, ղեկավարվելով հումանիզմի սկզբունքներով, պարտավորվում են ցուցաբերել արտակարգ և անհետաձգելի բուժօգնություն իրենց պետությունների քաղաքացիներին՝ առանց ծախսերի փոխադարձ հատուցման:

Կողմերը պարտավորվում են նաև մասնագիտացված բուժօգնություն ցուցաբերելու համար առողջապահության նախարարությունների ուղեգրով անարգել ընդունել իրենց պետությունների քաղաքացիներին՝ նրանց բուժման համար

հաշիվների հետագա ներկայացմամբ: Առանց առողջապահության նախարարությունների ուղեգրի բուժհիմնարկներ ընդունվող քաղաքացիների բուժօգնությունն իրականացվում է առևտրային հիմքով:

Պայմանավորվող կողմերի քաղաքացիներին բուժօգնություն ցուցաբերելու դիմաց փոխհաշվարկների պայմաններն ու կարգը կարգավորվում են Համաձայնագրին կից առանձին Հավելվածով:

Հոդված 7

Կողմերն իրականացնում են համատեղ աշխատանք բարձրագույն և միջին մասնագիտական հաստատությունների ուսումնական պլանների և ծրագրերի բարելավման ուղղությամբ, հաստատում են ուղղակի կապեր, ինչպես նաև փոխընդունելի պայմաններով կամ առևտրային հիմունքներով կատարում են ուսանողների և սովորողների փոխանակում:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են ապահովել գերատեսչական ենթակայության հիմնարկներում բժշկական, մանկավարժական և գիտական կադրերի որակավորման բարձրացումը պահանջներին համապատասխան և համապատասխան վարձատրությամբ:

Հոդված 9

Կողմերը ուղղակի կապեր են հաստատում սանիտարահամաճարակային ծառայությունների միջև, ապահովում են անհրաժեշտ սանիտարահամաճարակային աշխատանքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների կատարումը:

Հոդված 10

Կողմերը չեն թույլատրի բժշկական օգնության կազմակերպման, սանիտարահամաճարակային նորմատիվների կիրառման և կատարման հսկողության հետ կապված այնպիսի գործողություններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն թողնել այլ պետությունների քաղաքացիների առողջության վրա:

Հոդված 11

Կողմերը համաձայնեցին համագործակցել դեղագործության բնագավառում, ստեղծել դեղերի և բժշկական տեխնիկայի համատեղ ձեռնարկություններ, անցկացնել դեղաբանական հետազոտություններ, գրանցել և իրացնել իրենց և համատեղ արտադրվող դեղամիջոցները և բժշկական հրատարակումները:

Հոդված 12

Կողմերը համաձայնեցին նպաստել բժշկական և գիտական հետազոտությունների, բուժիչ զբոսաշրջության և բժշկական արդյունաբերության բնագավառում հայկական և վրացական գործարար շրջանների մասնակցությանը և համատեղ աշխատանքին:

Հոդված 13

Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը Համաձայնագրի ստորագրման օրվանից մեկ ամսվա ընթացքում ստեղծում են համակարգող հանձնաժողով՝ ընդգրկելով յուրաքանչյուր Կողմից երկու մարդ:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ, որոնք կձևակերպվեն Համաձայնագրի հավելվածի ձևով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Սույն Համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգվում է յուրաքանչյուր հաջորդ տարով, եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի գործողության հերթական ժամկետից առաջ մեկ ամսվա ընթացքում մյուս Կողմին գրավոր չի ծանուցում Համաձայնագրի դադարեցման մասին:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: